

## Տնտեսական քաղաքականության կառավարման ծրագիր՝ Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանում

Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանը հայտնում է Տնտեսական քաղաքականության կառավարման ծրագրի մեկնարկի մասին, որին մասնակցելու համար կարող են դիմել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Այս ծրագիրը կազմված է խոստումնալից մասնագետներին և դրսևորված ձեռքբերումներով ու մեծ հեռանկարայնությամբ քաղաքական գործիչներին այնպիսի հմտություններ ապահովելու համար, որոնցով կմշակվի և կիրականացվի արդյունավետ տնտեսական քաղաքականություն: Ուսումնական ծրագրում մեծ շեշտ է դրված զարգացող և անցումային տնտեսությունների հարցերի վրա:

Ծրագիրը ստեղծվել է Համաշխարհային բանկի հետ համատեղ, 11-ամսյա ինտենսիվ կուրսով Կոլումբիայի համալսարանում և 3-ամսյա պրակտիկայով Համաշխարհային բանկում կամ նմանատիպ կառույցներում:

Համաշխարհային բանկը Ծրագրին աջակցում է՝ 12 ուսանողի ամբողջական կրթաթոշակ տրամադրելով, Ծրագրով նախատեսված դասընթացներին հրավիրյալ դասախոսներ և ուսանողներին Համաշխարհային բանկում պրակտիկա ապահովելով:

Հնարավոր է ծրագրին մասնակցել ոչ միայն Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ. դիմորդների շահերից է բխում ֆինանսական աջակցության այլընտրանքային աղբյուրներ նկատի ունենալ: Նախկինում Ծրագրին կրթաթոշակներ են տրամադրել ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Աֆրիկայի զարգացման բանկը, Միջազգային զարգացման ամերիկյան գործակալությունը և այլն, ինչպես նաև՝ այն երկրների պետական գործակալություններն ու նախարարությունները, որտեղից հավակնորդները դիմում են:

**Հայտերն ընդունվում են մինչև 2013 թվականի հունվարի 26-ը:**

Մանրամասներին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝

[http://sipa.columbia.edu/academics/degree\\_programs/pepm/applying.html](http://sipa.columbia.edu/academics/degree_programs/pepm/applying.html) :

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի արտաքին կապերի բաժին, հեռ.՝ 541137, էլ-հասցե՝ [externalrelations@csc.am](mailto:externalrelations@csc.am) :